լու, պետք է որ վանքի մոտերքում լիներ կառուցված և հավանաբար այն վայրից ոչ հեռու, որտեղ գտնվում է նրա շինության արձանագրությունը, այսինքն այժմյան գյուղի այգիների մեջ (արձ. 175)։

Հովհաննեսի առաջնորդության ժամանակ է կառուցվել նաև ներքին ժամատունը, ինչպես տեսանք, ամիր Քրդի և Գրիգոր Տուտեորդու օժանդակությամբ, իսկ գմբեթակիր չորս սյուները շինվել են Լոռիի Կյուրիկե թագավորի երեք աղջիկների՝ Մարիամի, Բավրինայի, Ռուսուդանի, և քույր՝ Ռուսուդանի միջոցներով (տե՛ս արձ. 28—31)։

Եկեղեցին նորոգող և ժամատունը շինող վարպետ Ժամհայրի մասին ևս տեղում պահպանվել է մի արձանագրություն (արձ. 32), որով վանքի երախտագետ վանականները Աստվածածնա ավետման տոնի պատարագը մշտապես հատկացրել են նրան։

Հովհաննես Խաչենցին Լոռիի 1208 թվականի ժողովից հետո երկար չի ապրել։ Այդ ժամանակ, հավանաբար, նա ծեր է եղել և շուտով վախճանվել է։ Հովհաննեսը թաղվել է գյուղի արևելյան կողմում գտնվող «Թեփակիր» խաչքարի մոտ, որի օրոցաձև տապանաքարի վրա գրված է՝ «Յովհաննէս հայր»։ Թվական չունի, բայց քանի որ 1211 թվականին Սանահնի վանքում արդեն առաջնորդ էր Վարդան վարդապետը, ուրեմն Հովհաննեսի մահը տեղի պետք է ունեցած լինի 1208—1211 թվականների ժամանակամիջոցում։

Վերոհիշյալ Հովհաննեսի օրով է, որ 1191 թվականին Զաքարյանների Համազասպ Մարծպանի թոռները՝ Քուրդը, Հասանը, Համազասպը և Սարգիսը, իրենց կալվածքներից Սանահնի վանքին են նվիրել Մանթաշ լեռան կեսը և Տայքում իրենց ունեցած հողը։

1211 թվականին պատկանող մի հետաքրքիր արձանագրության մեջ, որ գրված է հայր Վարդանի և Գրիգոր վարդապետի առաջնորդության ժամանակ, Զաքարյան իշխանների գործակատար Վաչե իշխան Վաչուտյանցը գրում է, որ ինքը մի խորան է շինել, բացի այդ, վանքին տվել է մի ոսկետուփ ավետարան, խաչ և թանկարժեք գործք (առաքելոց)։ Այդպիսի ընթացիկ նվերներն այնքան շատ են, որ բոլոր արձանագրությունների կեսից ավելին են կազմում, բայց Զաքարյանները հատուկ հրովարտակով գյուղեր են հատկացրել վանքին, չնայած այն բանին, որ նրա հիմնադրման ժամանակ Բագրատունի թագավորները ևս գյուղեր և կալվածքներ էին նվիրել, որոնք հաստատվել են վանքի պատերին փորագրված արձանագրություններով։

Զաքարյանների տված նվերները, կարծում ենք, անհրաժեշտ են եղել վանքի համար այն պատճառով, որ Սանահնի միաբանների թիվն այդ ժամանակ անչափ շատացել էր։ Մատենագրական մի վկայությամբ Հաղբատա և Սանահնի վանքերի միաբանների թիվը դեռ ավելի վաղ շրջանում 500 էր։ Իսկ 12—13-րդ դարերում ավելի շատ պետք է լիներ։

Ստեփանոս Տարոնեցին Սանահնի և Հաղբատի վանքերի միաբանության մասին գրում է հետևյալը՝

«Յաւուրս սորա (Աշոտոյ Ողորմածի) շինեցան կրօնաւորանոցք, ճգնաւորականաց տեղիք Սեաւորդեաց աշխարհին, հաւասարակեացք, միաբանականք, ըստ յառաջասացեալ կանոնին սահմանադրութեան սրբոյն Բասղի, որոց երկոցունց տեղեացըն անուանք Հաղբատ և Սանահին հանդէպ միմեանց, միակրօնք ի տան Աստուծոյ՝ արանց Շ-ոց»[1]։

Այդտեղ հետաքրքիր է միաբանների հավասարակյաց լինելը, որ, իբրև Հաղբատին ու Սանահնին հատուկ երևույթ, շեշտել է պատմագիրը։

Հավասարակյաց լինելը ենթադրել է տալիս միաբանության անդամների մասնավոր գույք չունենալը, բայց վանահայրերի և մյուս վանականների իրենց միջոցներով զանազան կառուցումներ անելը և վանքին նվերներ տալը, որոնց մասին բազմաթիվ ապացույցներ կան, ցույց են տալիս, որ հավասարակյացf բառը գործ է ածվել վանքի ներքին կանոնին հավասարապես բոլորի ենթարկվելուն և ոչ թե նրանց ունեցած անձնական գույքին կամ ինչքային հավասարության։

[1] Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, բ տիպ, ՍՊԲ, 1885, էջ 181։